



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Կառլեն Զուրաբյանին
հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 20/60
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետ
պարոն Ա.Հարությունյանին

Կից ուղարկվում է Ձեր 16.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի
գանգատարկման հանձնաժողովի 17.02.2012թ. թիվ 6/2 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/2

17 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 01.02.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի 16.01.2012թ. գանգատը «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի» ՀՏ 15.11.2011թ. թիվ 2107793 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 14.02.2012թ. թիվ 6 որոշման, «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի» ՀՏ 15.11.2011թ. թիվ 2107793 ստուգման ակտի դեմ բերված գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու «Օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի» ՀՏ պետի 10.11.2011թ. թիվ 2107793 հանձնարարագրի, «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 15.11.2011թ-ին կազմվել է թիվ 2107793 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Կարեն Մուրադյանի կողմից 11.11.2011թ-ին ժամը 14:55-ին ք.Երևան, Մաշտոցի 20-60 հասցեում գտնվող պատճենահանման կետից կատարվեց հսկիչ գնում (մատուցվեց ծառայություն) 10 դրամի չափով՝ ՃՈ-ի ակտի պատճենահանում 10 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Կառլեն Զուրաբյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 15:00-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Հ» հաշվետվություն՝ 800 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Հ» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 10 դրամը, ժամը 15:01-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15:02-ին նորից դուրս բերվեց «Հ» հաշվետվությունը՝ 10 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի գանգատում մասնավորապես նշված է.

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը՝ խնդրում եմ անվավեր ճանաչել ստուգման արդյունքում կազմված 15.11.2011թ. թիվ 2107793 ակտը, քանի որ այն կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի և «Կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1561-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտումներով: Մասնավորապես, վերոնշյալ օրենքով սահմանված կարգի 1.4., 1.5., 1.6. կետերի համաձայն՝ «Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսավարող

սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները...», «Հսկիչ գնումից հետո հանձնարարագիրը ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին», «Հսկիչ գնման արդյունքում կազմվում է հարկային մարմնի կողմից սահմանված ձևով արձանագրություն՝ երկու օրինակից...»:

Հարկային տեսուչների կողմից չի ներկայացվել հսկիչ գնման իրականացման ուսումնասիրության հանձնարարագիրը և չի կազմվել համապատասխան արձանագրություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 27.11.03թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի համաձայն՝ կանխիկ հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման աղբյուրները հստակ են, և այդ աղբյուրներից համապատասխան պաշտոնատար անձանց հսկիչ գնման նպատակով դրամական հատկացումներ կատարելու համար ևս անհրաժեշտ է հսկիչ գնման ուսումնասիրության հանձնարարագիրը: Քանի որ հանձնարարագիրը բացակայում է, մնում է ենթադրել, որ իրականացված հսկիչ գնման ֆինանսավորման աղբյուր է հանդիսացել հարկային տեսուչի անձնական գրպանը:

Հայտնում եմ Ձեզ, որ ես, որպես հարկ վճարող, աշխատում եմ թափանցիկ, չեմ թաքցնում իմ եկամուտները, վճարում եմ հարկերը, իմ կողմից վարձակալած 3մ² տարածքում հիմնականում իրականացնում եմ թարգմանչական ծառայություններ և քաջատեղյակ եմ երևան քաղաքում գործող նմանատիպ գրասենյակների գործունեությանը: Դիմելով Ձեզ, ակնկալում եմ Ձեր արդարամիտ վարչարարությունը, քանի որ կազմված ստուգման ակտը, կարծես թե, «հարկային հետապնդման» արդյունք է:

Հաշվի առնելով իմ հարկային պատմությունը՝ խնդրում եմ Ձեզ անվավեր ճանաչել վերոնշյալ ակտը և ազատել ինձ առաջադրված տուգանքից:

«ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 10.11.2011թ. թիվ 2107793 հանձնարարագրի Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամակալային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, այլ ոչ թե ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ով սահմանված ուսումնասիրություն: Հետևապես գանգատում բերված այն պնդումները, որ խախտվել են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի և ՀՀ կառավարության 27.11.03թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի դրույթները, հիմնավոր չեն:

Հարկային տեսուչ Կարեն Մուրադյանը նշեց, որ իր կողմից 11.11.2011թ-ին ժամը 14:55-ին ք.Երևան, Մաշտոցի 20-60 հասցեում գտնվող պատճենահանման կետում կատարվել է ՃՈ-ի ակտի պատճենահանում 10 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Սակայն, Ա/Ձ Կառլեն Զուրաբյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը, որից հետո համապատասխան գործողություններով ապացուցել են ստուգման ակտով արձանագրված խախտման փաստը:

Ա/Ձ Կառլեն Զուրաբյանը նշեց, որ մինչև ստուգումն հարկային ծառայողների կողմից իրականացված վերլուծությունը, որի արդյունքերը և հիմք են հանդիսացել իր մոտ ստուգում կատարելու համար, իրատեսական չեն, քանի որ գործունեությունից եկամուտների հիմնական մասն առաջանում է անկանխիկ գործարքներից, որոնց շրջանառությունը ՀԴՄ-ով չի ֆիքսվում: Մասնավորապես, Ա/Ձ Կառլեն Զուրաբյանը նշեց, որ գործունեությունն

իրականացնում է 3մ² մակերես ունեցող տարածքում, իր և մեկ վարձու աշխատողի միջոցով: Նշված տարածքում մատուցվում են թարգմանչական և պատճենահանման ծառայություններ: Ընդ որում, պատճենահանումն իրականացվում է վարձու աշխատակցի կողմից:

Ստուգման օրը նշված վարձու աշխատողի հիվանդության պատճառով աշխատանքի չներկայանալու հետևանքով Ա/Ձ Կառլեն Զուրաբյանը գործունեությունն իրականացրել է միայնակ:

Ըստ Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի, այն պահին, երբ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձն առաջարկել է կատարել ակտում հիշատակված պատճենահանումը, նա խիստ զբաղված է եղել կոմպյուտերի վրա աշխատելով, որի պատճառով էլ մի գուցե (տվյալ պահին չի հիշում) պատճենահանման դիմաց գանձված գումարը չի մուտքագրել ՀԴՄ:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները, որի համար կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Ա/Ձ Կառլեն Զուրաբյանի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 15.11.2011թ. թիվ 2107793 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրապունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ